ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 թվականի N 1669-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետով, հիմք ընդունելով Ջրային կոմիտեի կողմից կառուցապատման թույլտվությունների էլեկտրոնային միասնական համակարգի՝ urban.e-gov.am կայքի միջոցով ներկայացված հայտը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Ջրային կոմիտեին տրամադրել նախագծման թույլտվություն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք, Ալավերդի համայնքի Ճոճկան գյուղի վարչական սահմանում գտնվող Դեբեդ գետի աջ ափից դեպի ձախ ափ ընկած հատվածում Ճոճկան-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգման, 100 գծմ մղման խողովակաշարի կառուցման, գետի մեջ 2-3 խարսխային հենասյուների կառուցման, սպասարկման կամրջակի, ափապաշտպան համակարգի կառուցման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. նոյեմբերի 07
ք. Ալավերդի